

891.85

5-36

06 DEC 2010

891.85-3

S-36

6

242

Կ Ա Ղ Ի Մ Ի Բ Տ Ե Տ Մ Ա Յ Ե Բ

Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ

Քարգոյս առսերէնից՝ Գ. ՄԵԼՈՅԵԱՆ

1912

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան ԵՂՈՒՆՈՒՐԱՆ

891.85-3

S-36

այս

242

147 254 5013 2/1

Կ Ա Ջ Ի Ը Ի Ի Բ Բ Ե Ե Տ Ր Ա Յ Ե Ի Բ

Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ

Թարգմ. ուսանողներից՝ Գ. ՄԵԼՈՅԵԱՆ

1912 թ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԿՈՒՆՏՈՒՐԱ»

619

ՀԵՐԱՅԻՆ ԲՈՒԿՆԵՐ

ԲԱՄԲԱԳՐԱՅ

ՀԵՐԱՅԻՆ ԲՈՒԿՆԵՐ

ՀԵՐԱՅԻՆ ԲՈՒԿՆԵՐ

Երբ որ Երևանի քաղաքում զմաստիցովս զգործակալսն
- քաղաքի վերահսկողն և զգործակալսն մասնաւորապէս
ընդհանրապէս մէջ հարցարար արձնելով զժողովուրդս
- մա ստորագրաց ճառագոյց զմաստիցովս զգործակալսն
միտուն զի և ուրիշ զգործակալսն զգործակալսն
- ասաւ թո զազգայնական աս զիս մէջից աս զմաստիցովս
- թոյ մաստան իոյ մասագործակալսն և ուրիշս զմաստիցովս
միջից Երևան մասնագործակալսն և ուրիշս զմաստիցովս
- աս Իմ ասալը ձգուած էր անազին անտառը:

ՅԱՂԹԱՆԱԿ

Մազազիթի լեռները, որոնք ծածկուած էին ան-
տառով և լի՝ նենգաւոր, անյատակ մ պատուածքնե-
րով, աղմկում էին գետերի ու ջրվեժների շնորհիւ.
Ճեղքուածքներն ու անդունդները բաց էին արել
իրանց երախները, որոնց մէջ թւում էր, թէ մահն է
ապրումսն թո ըստից մէջ ի տալիս ըստ ըստ ըստ:

Իմ մարդիկն ու մեքենաները ճանապարհն անց
էին կացնում այդ անտառի միջով և տապալում հրս-
կայական լեռները: Հարիւրաւոր կացիններ բարձրա-
նում էին ու կտրում ծառեր և այդ հարիւրաւոր
կացինները շարժում էին իմ ձեռքով: Աղմկող ու
չընկացող մեքենաների մէջ աղմկում էր իմ կամքը,
խփում էր իմ սիրտը: Հարիւրաւոր մարդիկ գգում,
գործում և ապրում էին իմ շնորհիւ: Իմ կեանքը, իմ
կամքը գտնւում էր այն պայթուցիկ ահանների մէջ,
որոնք խորտակում էին ապառաժ ժայռերն ու քարի
կտորտանքները: Երբ աչքս սևեռում էի եղևնու կա-
տարին, որ միայն հողմն էր ճանաչում և մազիլներն՝
իր վրայ օրօրեող արձւի, — եղևնին դողդողում էր և
հպարտ՝ գետին տապալում: Ահագին, դարաւոր հա-

ճարենիները տխրութեամբ խոնարհեցրել էին ճղները՝ մահուան սպասելով: Երբ ես կանգնում էի գետակների վերև, վերջիններս դադարում էին խոխոջելուց, նախ քան իրենց առաջը բացուած քարքարոտ անդունդը թափուիլը: Հողմը, որից խլում էի ծառերն այնտեղ, ուր մինչև այդ նա մոլեգնաբար ու սաստկութեամբ աղմկում էր, փառաբանելով անտառի լուսթիւնը, կամ հանդարտում կիսարթուն և մեզմ՝ իբրև իր որսով յագեցած լուսան (վայրի կատու),— կատաղութեամբ խփում էր երեսին՝ որովհետև ես նրան կողոպտում էի և վիրաւորում: Այծեամները, որոնցից ես խլում էի անտառը, ինձ տեսնելիս՝ խոնարհեցնում էին եղջիւրները և չարութեամբ բառաչում: Անտառի դարաւոր, կուսական խորքերը ես մտցնում էի ոչնչացումն, դժբախտութիւն, երկիւղ ու մահ:

Բայց այնտեղ...

Այնտեղ ես կեանք էի մտցնում: Այնտեղ, լեռների յետևը, շոգեկառքի սոււրցի և դղրդիւնի հետ թափանցելու էին՝ լուսոյ ճառագայթներ, նոր, լուսաւոր, մատաղ կեանք: Շոգեկառքի սոււրցի և գորգոռոցի հետ միասին այնտեղ պէտք է թափանցէր քաղաքակրթութիւն, մինչև այդ անյայտ բարօրութիւն, թափանցելու էր նոր դարաշրջան, վերածնութիւն այն ամենի, ինչ խորտակուել ու բորբոսով էր ծածկուել:

Բարձրաձայն «կեանք, կեանք...» աղաղակի հետ՝ ես առաջ էի անցնում և ճանապարհ բաց անում թրփերի, փլուածքների, անտառների, մացառների, ձորերի և անդունդների մէջ, սարսափեցնելով արծիւներին, գայլերին, պախրաներին,— և իմ ձեռքը բարձ-

րացնում էր հարիւրաւոր կացիններ. աղմկոյ ու չրխկացոյ մեքենաների մէջ՝ աղմկում էր իմ կամքը և խփում իմ սիրտը:

Այդպէս ես անցնում էի առաջ, առաջ ու առաջ:

Մենք արդէն անտառի խորքն էինք մտել: Գիշերը մեր խարոյկներն այրում էին հրեղէն բոցերով և ծխի քուլաները դէպի վեր խփում: Մեր մասին՝ պէտք է որ՝ անորոշ լուրեր հասած լինէին լեռների և անտառների միւս կողմը. երբեմն գաղտագողի մօտենում էին մեզ շուարած, սարսափած մարդիկ և թփերի ու մացառների միջից դիտում մեր աշխատանքը: Իմ մարդիկ նրանց անտառի ոգի էին անուանում:

Բայց ինձ համար այնպէս լաւ էր: Շուրջս վայրենի, ազատ, նախնական բնութիւնն էր, իսկ առջև՝ գեղեցիկ, մեծ և սուրբ նպատակը:

Այդ լարուած դրութեան մէջ ես ժամանակ չունէի մտքերս թունաւորել «ինչո՞ւ» սոսակալի հարցով: Ի հարկէ, ի հարկէ, ես ինչո՞ւ էի գնում այնտեղ, ինչո՞ւ համար էի շինում այդ ճանապարհը: Յիրաւի՝ ես կը տանեմ բարիք. արդեօք այդ բարիքը չի առաջացնի նոր շարիք, որ վատթարը լինի մինչ այդ եղածից: Ի հարկէ... Բայց ես ինձ հարց չէի տալիս այդ մասին: Կացիներն համաշափ զարկը և նրանց անուշիկ արձագանգը յետ էին մղում ինձնից բոլոր բեֆլեկտիւ, քննադատական մտքերը. ես զգում էի, որ ստեղծում եմ և ձգտում. որ աշխատանքն՝ ըստ ինքեան՝ կարող է լինել նպատակ, երջանկութիւն, որ փնտւում ես՝ միայն ի սէր բաւականութեան, որ-

պէս մտաւոր մարգանք՝ անհասկանալի գրքերի գրութ-
 ւար, ծանր ընթերցման ժամանակ: Մարդը, սակայն,
 նման է ցատկատու և վազվզող երեխայի, որը չի
 մտածում իւր արածի մասին. նրան գէպի այդ մղողն
 իր երիտասարդական աւիւնն է: Ճիշտ այգպէս էլ
 աւախու գործունէութիւն է հարկաւոր այն մարդկանց,
 որոնք ընդունակ են այդ բանին, որոնց մէջ ոյժ,
 համարձակութիւն և նախաձեռնութիւն կայ:

Երբ վերջացրի ճանապարհիս կառուցման յատա-
 կապիժը, ինձ թուաց, թէ գրասենեակում չեմ նստած՝
 գրասեղանի, նկարների և կարկինի առաջ: Երևակա-
 յութեանս գծագրուեց այն, ինչ տեսնում եմ այժմ.
 զնացի անտառը, կուսական կեանքի ծովը սուղուեցայ,
 և միջանի անգամ թղթի վրայ գծեր անցկացնելով,
 ցատկեցի սեղանի մօտից՝ ձեռներս վեր բարձրա-
 ցրած, ճնշուած շնչառութեամբ և ճիշդ շրթունքներիս
 սեղմած: Իմ հոգին, նախնական մարդու հոգին՝ փա-
 փագում էր լինել իր հայրենիքում, իր տանը: Բայց
 ես չէի գնացել այնտեղ ապրելու համար, ես նպա-
 տակ ունէի. ինձ տանողը բանականութիւնն էր,
 կամքն ու ձգտումը. հեռացած սկզբնական «ես»-իցս՝
 անցնում էի քաղաքակրթութեան ողջ գարաշրջան-
 ներ, տասնեակ հազարաւոր տարիներ:

Դանդաղ, յամառ ընդդիմադրութեամբ բացուում
 էր մեր աւաջ անտառի խորքը: Շատ անգամ, երբ
 դիտում էի ձորերը, որոնք լցուած էին խճաքարով,
 եղևնիների և հաճարենիների կտարաուած բներով,
 հոլից դուրս պրծած արմատներով, ինձ թուում էր,
 թէ անտառն իմ գլխին պատիժ ու վրէժխնդրութիւն

է կանչում՝ գործ գրածս բռնութեան համար: Իէպի
 վեր ցցուած ձղներն ու արմատներն ինձ թուում էին
 ինչ որ տիտանների ու հսկաների ձեռներ, որ կո-
 տրրակել ու փշրել էր մոլեգին անպղտածը:

Իսկ այնտեղ՝ բարձրում՝ չէ որ պէտք է լինի
 որևէ նեմեզիդա (հին յունաց մէջ վրէժխնդրութեան
 աստուածուհին էր) կամ Փատում (ճակատագիր),
 որոնք բարձր են կանգնած աստուածներից ու մարդ-
 կանցից:

Երբեմն ինձ համակում էր երկիւղը:

Մնտառի խորքերը, դարաւոր ծառերն ու ան-
 շարժ ժայռերն ինչ գործ ունէին որևէ է լոյսի, ինչ
 որ մարդկանց և մարդկային նպատակների հետ:
 Սառն, անյողդողդ, անտարբեր բնութիւնն ինչ կապ
 ունի մարդու կեանքի հետ: Ինչ ընդհանուր բան
 կայ նրանց միջև: Որպէս ասողերը երկնքում, այն-
 պէս և ծառերը երկրի վրայ՝ ոչինչ չը դիտեն մարդու
 մասին: Փիզիկապէս գոյութիւն ունի մի անագին,
 ընդհանուր նիւթ միայն. մի ընդհանուր, հիմնական
 սկզբնաւորութիւն, մի նախնական գոյութիւն, ընդ-
 հանուր սփրը, որի մօտ կարելի է ամեն ինչ բերել,
 իսկ մնացեալ բաներում՝

Մենք ամենքս նաւակ ենք միայն:

Բնութեան անտարբեր ծովի գոռ ալիքներում...

Ուր սէր չկայ, չի լինի և ատելութիւն. բայց
 միակ զգացումը, որ կարող էր լինել մարդու և բնու-
 թեան միջև, եթէ ընդհանրապէս նրանց մէջ գոյու-
 թիւն ունենար որևէ զգացմունք, — ատելութիւնը կը
 լինէր: Այնտեղ՝ բարձրում, երկրից վերև «աստղե-

բի աչքով նայում էր գոյութեան ահաւոր, յաւիտե-
նական անտարբերութիւնը», այստեղ՝ ցածրում, եր-
կրի վրայ, ուր կռիւն է բորբոքւում, — ատելութիւնն ու
թշնամութիւնն էր թագաւորում:

Յոգնածութիւնից ես երեկոյեան ննջեցի քարա-
ցած դրութեամբ. բայց առաւօտեան, երբ ամպերը
չորս կողմից ծածկեցին հորիզոնը, երբ մրգահաւի
թփերն ու վայրի մուխները՝ կաշելով սոճիներին՝
վշտագին կերպով սուզուեցան մառախուղի մէջ, երբ
ցօղը կաթկթում էր ծառերի բներից կամ անձրև էր
գալիս, և կտրուած հսկայ ծառերի, քառանկիւնի գե-
րանների ու տախտակների կոյտերն ապակու նման
փայլում էին՝ տարածելով կծու, ծանր հոտ, — ես
բռնուեցայ մի ինչ որ երկիւղով:

Ես կամենում էի այդ միջոցին տարածել ձեռ-
ներս և գոչել անտառին. — հասկացիր, որ ես մարդ
եմ, որ ես պարտաւոր եմ այդպէս անել. հասկացիր,
որ ես չեմ գնում քո դէմ՝ լոկ կռուի և քեզ յաղթա-
հարելու համար, — ինձ բարձրագոյն զօրութիւնն է
առաջնորդում. այն ոգին, որ ոչ ես եմ ըմբռնում,
ոչ դու, որ Աստուած է ներշնչել մարդուն, Իրեն
վերապահելով նրան ըմբռնելն ու տեսնելը: Աստուած
նախօրօք պատուիրել էր քեզ՝ փակել մեր առաջ
ձանապարհը, իսկ մեզ՝ անցկացնել ձանապարհը քո
միջով, — դու պարտաւոր ես հնազանդուել, պարտա-
ւոր ես զիջել. դու կոյր, կամազուրկ ոյժ ես, ինչ-
պէս բօլուկը գոմէշների, — դու պէտք է յաղթուես

մարդկային բանականութիւնից: Ինչո՞ւ հապա ապա-
ռաժուտ ժայռերիդ կտորտանքները չես թափում
մեզ վրայ, ինչո՞ւ հեղեղով չես խեղդում մեզ, ինչո՞ւ
մոլեգին շանթերի կարկտով չես սրբում մեզ երկրի
երեսից: Դու մեռած ես, անբան, կամազուրկ. դու
բօլուկ ես գոմէշների, որոնց մի հովիւ միայն քշում
է խարազանով, և նրանք գնում են այնտեղ, ուր
ցանկանում է վերջինս:

Բայց երբեմն ինձ թւում էր, թէ այնտեղից,
անտառի խորքից, լսում է ինչ որ ձայն. բնութեան
ինչ որ վիթխարի և զարհուրելի ոգի ծառանում է
իմ դէմ և շեշտակի երեսին նայում. բարձրանում է
ձորերից, անտառի բլուրների յետևից և ես տես-
նում եմ նրա կուրծքը... Իր չարագուշակ, կապտա-
ւուն, կարկառայր ամպի նման աչքերով և սեպածև
ուսերի լայնութեամբ՝ ինձ վրայ սարսափ էր ազդում.
սակայն նա չի բարձրացնում իմ դէմ ձեռները. ես
նրանց չեմ տեսնում բլուրների վրայ գտնուած
թփերի ետևում: Եւ ինձ թւում էր, թէ նա ժպտում
է՝ հսկայ-աստծու ինչ որ հեզնանքով:

— Ուրեմն դու կայծակնահար չե՞ս անում ինձ.
չե՞ս գլորում անդունդը, այլ թոյլ ես տալիս, որ եր-
կրի վրայ սողացող աննշան օձը, որին կարող եմ
կրունկովս ջախջախել, կամ առջևիցս փախչող կա-
րիճը, — խայթե՛ն ինձ:

— Իսկ ոգին ժպտաց, կուրծքը ծածկելով բլուր-
ների ետևը. ապա բոլորովին թագնուեց՝ ճահճային

մամուի վրայ ամփոփուեցու և կզակը հաւամբզենու և վայրի մուռնու վրայ գնելու համար:

Ես չը գիտեմ, արդեօք մենք երկաթ Ժամանակ անտառի խորքումն էինք, որովհետև կորցրել էի օրերի և գիշերների հաշիւը: Բայց, իսկապէս, անցել էր արդէն երկու ամիս: Սկզբում մենք հանդիպում էինք հովիւների և անտառապահների, իսկ յետոյ սչ ոքի, բայց միայն անտառի միւս կողմն ապրող մարդկանց, որոնք Ժամանակ առ Ժամանակ յայտնուում էին թփերի մէջ:

Եւ յանկարծ մի անգամ, արեգակը մայր մըտնելիս, երբ բոլորս վերջացրել էինք աշխատանքները և հաւաքուում էինք մեր խրճիթները, լսեցինք շրների հաշոց:

Համարեա բոլորս ահամայ Ժպտացինք և մի քանիսը դռացին ուրախութեամբ՝ «ան, ան»: Մենք արդէն բոլորովին վայրենացել էինք անտառի խորքում և ձեռք էինք քաշել բնակարաններից ու ընտանի կենդանիներից: Այդքան Ժամանակից յետոյ, հաւանօրէն, առաջին անգամն էր, որ մենք գնուում էինք միմեանց, մենք գրեթէ սեացել էինք՝ ծխից, ձիւթից, քամուց և արևից, գզգզուել՝ մացառներից. աւելի շուտ աւազակների խմբի էինք նման, քան թէ քաղաքակրթուած աշխարհի մարդկանց:

Շուտը հաջեց. ես ձայնիցն իմացայ, որ դա որսորդական քերձէ էր, որ հաջում էր մեր ետքից: Շուտով նա թփերի մէջ աղմուկ հանեց, իսկ յետոյ

կիսով չափ դուրս եկաւ թփուտներից և սկսեց կաղկանձել... Ապա ճիշտ այնպէս, ինչպէս բօսանտիկական պատմութեան մէջ, թփերի ու ծառերի մէջ յայտնուեց սկզբում քարայծի գլուխ, իսկ յետոյ ինչ որ կախարդական դժոյ կամ անատի յաւերժահարսն՝ բաղէն ձեռքին. մէկն այն էակներից, որոնց մասին ասում են. — սչ, դու բնաւ չկաս, դու լոկ հրաշալի անսիր էս:

Եւ անտան սկսեց մի օտարօտի, արտասովոր աղմուկ հանել: Մի ինչ որ քնքոյշ, դուրեկան շրշուէ սահեց տերեւների վրայով հեռու և հեռու, ապա տարածուելով մարեց խաւարի մէջ:

«Ես կախարդուած անտան եմ. անեզր, խիտ անտառը», — խշխշաց հաճարենիներէ ու եղինիների մէջ:

«Այն անտառը, որին մարդու ոտք չի գիւպել կուսական, անարատ անտառը»:

«Ե՛կ, ընկղմուիր, խորասուզուիր իմ մէջ, որպէս ստոնորակ առուակի ջրի, որպէս այդու միջից սոյոսկացող անուշաբոյր աղբիւրի մէջ:

«Որպէս շուշաններով և կարմիր կակաջներով շրջապատուած անուշաբոյր աղբիւրի մէջ:

«Ե՛կ, թող ջուրն աղմկի պարանոցիդ մօտ և, կաթիլներն, իբրև աստղեր, ցայտեն աչքերիդ մէջ»:

Այդ տեեց, իսկապէս, միայն մի վայրկեան: Երբ կրկին այն կողմը նայեցի, նա չը կար այլ ևս:

Ես, ըստ սովորականին, չը գնացի ընթերու

բանւորների հետ՝ խարոյկի մօտ: Փակուեցայ, հիւղիս մէջ և ընկայ անկողնիս վրայ: Երկու ամիս էր՝ կին չէի տեսել. մոռացել ու ձեռք էի քաշել նրանից:

Այդ ամայութեան, անընդհատ կռուի և աշխատանքների մէջ, ապրելով միմիայն գլուխս շարունակ փոթորկող մաքով, ես ժամանակ չունէի մտածելու կնոջ մասին: Ոչ մի բան տեղիք չէր տալիս ինձ՝ մտածելու նրա մասին և նրան յիշելու: Մեր անցած աշխարհում այնպիսի խրոխտ վեհութիւն, մեր աշխատանքի մէջ այնքան լուրջ և կարևոր բան կար, որ ոչ մէկը ուրախ կամ աշխոյժ երգ չէր երգում, ոչ ոք անբարոյական կամ անպարկեշտ բաների մասին չէր խօսում: Ծանր աշխատանքն ու բնութեան վեհութիւնը մեզ դարձրել էին երկաթէ մրկաններ և երկաթէ կամք ունեցող ինչ որ ոգիներ: Մարդկային բնագոյներն ու կրքերը թափուել էին մեզնից, որպէս ցրտից թռչնած տերևները՝ ծառերից: Այնպէս լաւ էի զգում ինձ և այնպէս ազատ. միտքս այնպէս պայծառ էր, զգաստ և ուժեղ, այնպէս խաղաղ ու վստահ. ինձ համակել էր աշխոյժն ու եռանդը:

Ո՞վ էր նա, այդ կինը: Ո՞րտեղից յայտնուեց նա այս անտառում: Ինչո՞ւ եկաւ:

Իմ անդորր, քաղցր քունը չքացաւ: Ես, կարծես, ինձ թունաւորուած զգացի: Մահճակալի վրայ այս ու այն կողմը շուռ եկայ և չը կարողացայ, ասենք, չուղեցի քնել: Մոռացուած բնագոյներն սկսան արթննալ: Կնոջ կորսուած, անյայտացած, ազօտ պատկերն աւելի բացայայտ, որոշ դարձաւ և վերակենդանացաւ: Այն, ինչ որ տեսայ միայն մի վայրկեան և որը լոկ պատրանք էր աչքիս համար, սկսեց

ձև ստանալ ու մարմնաւորուիլ: Ես արդէն տեսնում էի կնոջ մարմինը, զգում, ճանաչում և յիշում էի:

Եթէ նա անտառից դուրս ինչ որ աղջիկ է, որևէ վայրենու կամ անտառապահի աղջիկ, ապա ուրեմն ինչո՞ւ չը վերցնել նրան, ինչո՞ւ չամուսնանայ հետը, եթէ միայն ցանկանայ ինձ առնել: Այն ժամանակ մենք միասին կաշխատենք, միասին կը կառուցենք այս ճանապարհը, լոյս և հաց կը տանենք անտառի այն կողմը գտնուած հովիտը: Միասին, ձեռք ձեռքի տուած, հոգով միացած:

Հն-հն-հն: Քրքջացի ես բարձրաձայն ծիծաղով: Մշտական ստութիւն, մշտական խարէութիւն, որ պահանջում է կինը տղամարդկանցից և որը հարկադրում է վերջիններիս՝ ջախջախուել իր իսկ առջև:

Ես երիտասարդ էի, 28 տարեկան. երկու ամիս էր՝ կին չէի տեսել. լաւ ուսում եմ և խմում, առօրջ եմ. ես նրա զիրկը, նրա շրթունքն եմ ցանկանում, և ոչ թէ հոգին ու միաբան աշխատանքը: Աշխատանք զաղափարի համար: Հն-հն-հն: Ես նորից ըսկսեցի հրճալ: Ծիծաղելի, տարօրինակ ֆրագ: Եթէ նա այստեղ լինէր ինձ հետ և ուսերին փռուած ունենար հիւսքը մազերի, այդ դէպքում ես, անշուշտ, միւս օրն արդէն չէի մտածիլ եղբայրութեան և զաղափարի համար կատարող միաբան աշխատանքի մասին: Ստութիւն, խարէութիւն: Մեր հոգին աւելի լաւ է արտայայտում մեր ներքին աշխարհը*):

*) Ծանօթ.— Զգացմունքները նախնական մարդու մէջ աւելի զօրեղ էին, քան ներկայ մարդու, որ ձգտում է զեկափարուել զիւրաւորապէս բանականութեամբ: Գ. Մ.

Բայց եթէ նա գեղեցիկ է. գեղեցիկ՝ որպէս
Ֆլորենտինայի վեներան:

Իսկապէս, ես ինչ գործ ունեմ անտառից գուր-
սը գտնուած այդ մարդկանց հետ: Երկար չեմ ապրի,
և միայն մի անգամ եմ ապրելու:

Ես վեր թռայ անկողնիցս և մի դոյլ սառը ջուր
ածեցի գլխիս: Ապա լեցրի մի ամբողջ թաս և սկսայ
բուռն եռանդով գլուխս թրջել ջրով: Յետոյ արգէն
ես չը կարողացայ ծիծաղս դսպել այն մաքրից, թէ
հոգեկան տպաւորութիւնս ֆիզիկական որպիսի հե-
տեանք առաջացրեց. ինձ համար միանգամայն պար-
զուեց հոգեկան զրգիռից առաջացած բնախօսական
ֆունկցիաների կօմիդմը: Ես շփեցի գլուխս և սիգա-
բը ծխելով՝ հիւզիցս գուրս եկայ անտառը:

Չորս կողմն անդորրութիւն էր տիրում և գի-
շեր: Ծառերից վեր՝ պայծառ, անամպ, մուգ-կապու-
տակ երկնքում փայլում էին աստղերը: Երեխայ
ժամանակս այդ տեսակ գիշերներ շատ էի անցկաց-
նում ուրիշ լեռներում:

Գիշեր էր աստղալից գիշեր:

«Ն'կ, — շնչաց անտառը, — ես կախարդուած ան-
տառն եմ. անեզր, խիտ անտառը:

«Իմ մէջ կայ աղբիւր, խնկարոյր աղբիւր՝ շրջա-
պատուած շուշաններով և կարմիր կակաջներով:

«Ն'կ, թող ջուրն աղմկի պարանոցիդ մօտ, կա-
թիլներն՝ իբրև աստղեր՝ թող ցայտեն աչքերիդ մէջ,
երբ գլուխդ թրջես աղբիւրի ջրում, երբ սիրտդ՝
շուշուաններով և կարմրատերև կակաջներով շրջա-
պատուած ջրի մէջ սուպես»:

— Հրաշագեղ, չքննող էութիւն: Ես քեզ եմ ցան-
կանում, քեզ եմ ուզում և որոնում, — սկսեցի աղա-
ղակել՝ անտառին, անդորրութեան, մթութեան և ան-
տառի վերև ցրուած աստղերին:

Յաջորդ օրը ես ուշ վեր կացայ. գլուխս ծանրու-
ցած էր: Եւ առաջին անգամս էր, որ ես չէի արթ-
նացնում բանւորներին: Ծերունի Շիմօնը, իմ գլխա-
ւոր օգնականն ու մասնագէտը՝ պայթուցիկ ականներ
դնելու գործում, մօտեցաւ ինձ, անհանգստութեամբ
նայեց և գլխարկը վերցնելով հարցրեց.

— Դուք խօսմ հիւանդ չէք, պարսն ինժեներ:

— Ո՛չ, ես սովորականից շատ քնեցի:

— Եւ դուք անհանգիստ էիք քնած: Ես հիւզի
մօտ մի փոքր աղանջ դրի: Չէ՞ որ մենք միշտ բարե-
ւում էինք միմեանց ժամը չորսին. իսկ այժմ ութը
լրանալուն մօտ է:

Երկար քնեցի, որովհետև ուշ պառկեցայ. է, գործն
առաջ գնում է:

— Գնում է. բայց այնտեղ՝ դէպի ձախ, փոքր ինչ
ներքև, ջրի միւս կողմը՝ մարդկային բնակարան է
գտնուում:

Ես ցնցուեցայ, սակայն աշխատեցի երևան չը հա-
նել յուզմունքս:

— Ո՞վ է ասպրում այնտեղ:

— Թագաւորական անտառապահը:

— Միայնակ:

— Ո՛չ, այնտեղ կայ մի փոքր ագարակ. ծառա-

ներ, կովեր, ձիեր, կանոնաւոր անտեսութիւն:

— Իսկ տանն ո՞վ կայ:

— Նա հիւսա չը կայ, գնացել է մայրաքաղաք: Մնացել է միայն կինը:

— Ո՞րտեղից գիտէք դուք այդ բոլորը:

— Չէ՞ որ այստեղից երկու կիլոմետր է հեռու միայն: Այնտեղ են եղել մեր մարդիկ. նրանք, որոնք կոտորում են անտառը:

Ես Շիմօնին սիգար տուի և ուզում էի գնալ, սակայն ծերունին յարեց.

— Վատ չէր լինի, պարոն ինժեներ, որ դուք գոնէ այս քանի օրս ապրէիք օրինաւոր տան մէջ և ոչ խրճիթում, քանի դեռ աշխատելու ենք այստեղ: Ապա թէ ոչ, կարող էք հիւանդանալ:

— Բայց չէ՞ որ մենք այստեղ երկար չենք մնալ: Պէտք է գետն անցնենք և իր ժամանակին տեղաւորուենք այն կողմը:

— Գոնէ առժամանակ:

Ես հեռացայ նրանից: Ուրեմն այդ, հաւանօրէն, թագաւորական անտառապահի աղջիկն է:

Ես դիտեցի աշխատանքն՝ առանց որևէ բան նշմարելու. միայն՝ շնորհիւ մեքենայական հմտութեանս՝ ցոյց չը տուի բանւորներին, թէ ոչինչ չեմ նկատում:

Ես շտապով մտայ հիւղս, ցոյց տալով, իբրև թէ նամակ պէտք է գրեմ: Իսկն ասած, ես կամենում էի համարձակութիւն ձեռք բերել՝ ագարակը գնալու: Սկըսայ հագնուիլ փնտռեցի հայելին, կիսով չափ հագնուե-

ցի: Յետոյ սկսայ ոչ թէ հանուիլ, այլ գլխի շորերս կատաղութեամբ: Ապա կրկին սկսեցի հագնուել՝ դանդաղ, սիստեմատիկաբար շրթունքս խածելով. փողկապն անդորրութեամբ կապեցի, բայց մասներով այնպէս ձիգ տուի, կարծես ուզում էի խեղդել ինձ: Հագնուեցի: Ատրճանակը գրպանս դրի, մտրակը ձեռքս առայ, հրամայեցի ձին բերել և գնացի ագարակի հակառակ կողմը, որպէսզի պտոյտ գործելով, շուտ գամ դէպի ագարակը:

Մակայն ես շարունակ հեռու և հեռու էի գնում:

Անտառն սկսեց ինձ հրապուրել և իրեն ձգել: Նա քաշում էր ճիշտ այնպէս, ինչպէս խաւարը, ջուրը, լեռները. թւում է, թէ խեղդում ես ինչ որ անդունդի մէջ:

Գնում էի միշտ հեռու և հեռու՝ մացառների, մամուռի, հաւամրգենու և վայրի մոտենու թփերի միջով: Այստեղ արդէն չէր լսում ոչ կացինների զարկը, ոչ մուրճերի հարուածը: Միայն մի անգամ ճայթիւնի ձայն լսեցի. դա ժայռը խորտակող ականն էր: Մենք գետի վրայ անց էինք կացնում ժամանակաւոր կամուրջ և սկսում աջ ափին տուններ բաց անել:

Ես հեռու դնացի:

Հագիս ունէի նոր, շքեղ, մուգ-կապտաւուն գոյնի կօստիւմ, անդրավարտիքը՝ որմզդեղնի կաշուց, պլլպլան կօշիկ և խիստ գեղեցիկ, նորածե փողկապ՝ մարգարտազարդ քորոցով: Ինչո՞ւ էի այդպէս պճնուել անտառն ուղևորուելիս, ուր՝ մինչև այդ՝ ինձ տեսնում էին միայն սկիւռները, կզաքիսները, վայրի կատու-

1002
6143

ներն ու լեռնային ճարեկները: Ծուռ տուրի ձկուն գլուխը և սկսայ իջնել հովիտը: Իմ առաջ բացուեց կանաչ ու փափուկ ճանապարհը. դէպի ցած սրացայ, որքան կարող էի. յանկարծ դիմացս բացուեց մի փոքր բարձրութիւն, իսկ նրա յետևը՝ մի քանի հարիւր քայլ հեռու՝ տունն ու գիւղատնտեսական շէնքերը:

Անտառապահի ազարակն էր:

Մի րոտ սկսեց բարախել. սոսկալի կերպով շփոթուեցի. ինչո՞վ բացատրեմ իմ գալը: Մարդկանց կարծան էի քաշում: Նրանց ինչ. ես ուզում եմ՝ մի քանի օր նրանց տանն ասլրել: Կարող եմ ինձ այնպէս ընդունել, որ այդ՝ իբրև սակր՝ կոկորդիս կը մնայ:

Կասեմ, թէ որովհետեւ ես կին տեսայ, եկայ նախազգուշացնելու, որ ժայռերը խորտակելու միջոցին սոսկալի դղրդիւն կը լինի...

Ես այլևս ոչ մի բանի մասին չը մտածեցի և շարունակեցի առաջ գնալ: Ձին, որ ձանձրացել էր անտառի ձորակներից ու թմբերից, հողմի պէս սլանում էր փափուկ ճանապարհով: Որսորդական շներն սկսան կաղկանձել ցանկապատի յետևից: Բայց իսկոյն մի ոմն սուլեց և հանգստացրեց նրանց: Ես մօտեցայ դարպասին: Առաջ եկաւ մշակը:

— Ո՞վ է.

Թագաւորական ինժեները:

Նա գլխարկը վերցրեց:

— Ի՞նչ էք հրամայում:

— Տանը մարդ կան:

— Տիրուհին տանն է:

«Իսկ օրիորդը» — ուզում էի հարցնել, և չափազանց անախորժ դրութիւն ստեղծուեց ինձ համար: Ես հանեցի այցեատմաս, հրամայեցի յայտնել իմ մասին և բախը մտայ:

Մի րոպէից յետոյ մշակը վերադարձաւ ու տեղեկացրեց, որ տիրուհին այդումն է և խնդրում է ինձ այնտեղ:

Չայրացած անյաջողութեանս վրայ, ես ձիս յանձնեցի մշակին և գնացի՝ ինձ դիմաւորելու դուրս եկած՝ սպասաւորի ետևից: Կասեմ՝ այդ կնոջ, որ պայթումներ են լինելու, և գրոնի իր հետ:

Կը մնամ մի րոպէ, կասեմ ու կը հեռանամ:

Չեմ հարցնի մինչև իսկ այլևայ մասին:

Մենք նախազաւթով անցանք ու մտանք այգին: Եւ կրկին բոմանախկական պատմուածքների տեսարանը. ձեռնասուն բազէն ձիւղի վրայ, քարայծն ու որսորդական շունը նրա ոտների մօտ, իսկ հողաթումբ նստարանի վրայ՝ դիրքը ձեռքին՝ նստած էր նա ինքը, որ բնաւ գոյութիւն չունի, որ միայն ըսքանչելի տեսիլք է...

Դուք իմ մարդու ընկերն էք, որովհետեւ երկուսդ էլ թագաւորին էք ծառայում, — ասաց նա, վեր կենալով և ձեռքն ինձ մեկնելով, — այդ պատճառով էլ ես ընդունում եմ ձեզ, չ'նայած, որ մարդս տանը չէ: Նստեցէք, խնդրեմ: Դուք այստեղ ճանապարհ էք շինում, ճիշտ է:

Նման և ոչ մի խօսք, թէ ինչո՞վ կարող եմ ծառայել եւայն:

Ես նստեցի, և մենք, չեմ յիշում, թէ ինչի մասին սկսանք զրուցել:

Երբ նա խօսում էր, ինձ թւում էր, թէ ծաղիկ ծաղկի յետևից է խոնարհւում: Նրա խոշոր, մուգ-կապուտակ աչքերը սահում էին դէմքիս վրայով և խօսում մի լեզուով, որ ընդհանուր ոչինչ չունէր շրթունքների խօսածի հետ:

Նոքա հարցնում էին:

Հարցնում էին այն բանի մասին, որ անկարելի է արտայայտել. խիստ խորհրդաւոր և գաղտնի բանի մասին: Հարցնում էին անդադրում, շարունակ, յամառութեամբ, հրամայողաբար: Ես պարտաւոր էի, կարծես, հաշիւ տալ որևէ բանի համար. և այդ զրգուում, զայրացնում էր ինձ, բայց միևնոյն ժամանակ աննկարագրելի հաճոյք պատճառում:

Ես կը պատմեմ քեզ բոլորը, բոլորը, —ասում էի նրան հայեացքովս, — որովհետև սիրում եմ քեզ...

Իսկ նրա աչքերն՝ ինձ փորձելուց և հարցաքննութիւնն ավարտելուց յետոյ՝ սկսեցին զրնգալ ու հնչել:

— Ահա կախարդուած, խիտ անտառը, որին մարդու ոտք չի դիպել. կուսական, անարատ անտառը...

— Ե՛կ, թագնուիր, խորասուզուիր նրա մէջ, որպէս կենսաբոյր աղբիւրի ջրի, որ հոսում է այդու միջով...

— Ե՛կ, թող կաթիլներն՝ իրրև աստղեր՝ ցայտեն աչքերիդ մէջ. շուշանների և կարմիր կակաջների միջով սողոսկացող ջրի կաթիլներ...»

Յետոյ մենք գնացինք սենեակը՝ սուրճ խմելու:

Այնտեղ կային՝ գէնքեր, որսորդական փողեր, վարազի գլուխներ, արջի մորթիներ և տարածուած թեւերով արծուի խրատիլակներ:

Պատից կախուած էր ծերունու նկարը:

— Իմ մարդն է, — նա ձեռքով ցոյց տուաւ նկարը:

Հակառակ ցանկութեանս՝ խիստ արագ դուրս թուաւ բերնիցս.

— Ձեր մարդը՞:

Նա ժպտաց ու պատասխանեց.

— Այն, պարոն ինժեներ:

Երբ հրաժեշտ էի տալիս, նա պինդ սեղմեց ձեռքս և տասց.

— Յոյս ունիմ, որ դուք շուտ-շուտ կայցելէք ինձ: Մարդս երկար ժամանակով է գնացել մայրաքաղաք, և ես խիստ ձանձրանում եմ միայնակ: Վաղը եկէք ճաշելու:

Շնորհակալ եմ. չեմ կարող ճաշելու գալ, զբաղուած եմ:

Այդ դէպքում՝ ընթրելու:

Գերազաս համարեցի վերջինը:

Համբուրեցի նրա ձեռքը: Ես պատրաստ էի համբուրել նրան այդպէս ընդմիշտ: Ձին նստեցի և ուղևորուեցայ դէպի սարը: Յետ նայեցի, նա կանգնած էր այգում:

Առաջ՝ քան գլխարկս հանելը՝ նա դէպ ինձ մեկնեց իր ձեռքը, որով բռնած ունէր թաշկինակ:

Գրեթէ չը գիտակցելով, թէ ինչ եմ անում, նրան օգային համբոյր ուղարկեցի:

Նա շտապով շուտ եկաւ:

Ես խթեցի ձիուս և գոչեցի. — աւելի շուտ գընդակը ճակատիս կը գարնեմ, — ու, որպէս խելագար, տուն շտապեցի:

Յաջորդ օր՝ առաւօտեան ժամը չորսին՝ աշխատում էի, մուրճը ձեռքիս, իբրև հասարակ բանւոր: Ես ասացի, թէ փոքր ինչ վատառողջ եմ և կամենում եմ ազատուել մրսելուց:

Գիշերը վրայ էր հասնում արդէն, իսկ ես աշխատում էի դեռ:

Երեկոյեան առաջարկեցի առանձին վճարով ցանկացողներին՝ լապտերներով աշխատել գիշերը, բացատրելով, թէ վախենում եմ անձրևից, որ կարող է ողողել մեր ճանապարհը և կաւով լեցնել: Գտնուեցան միքանի ցանկացողներ:

Առաւօտեան, յոգնած ու թալկացած, համարեան ուժաթափ, ընկայ անկողնիս վրայ:

Երբ արթնացայ, ծառայող տղան յայտնեց, որ մի գրաբեր մարդ սպասպում է ինձ:

Միրոս մուրճի պէս գարնել սկսաւ:

— Չի ցանկանում ինձ առնն ընդունել, — գուշակեցի ես:

— Տներ նամակը և արձակիր մարդուն:

— Ասում է՝ պատասխանի եմ սպասում:

Տուր նամակը:

«Դուք ինչ՞ը երեկոյեան չեկաք: Գրեցէք, երբ էք գալու: Դուք կրեմ սիրողներից էք, և կրեմը կար: Որովհետև դուք չը կայիք, Բեմը, Զագրայն ու Պօլեօտը (բաղէի անունն է) կերան: Այսինքն Պօլեօտը կերաւ այնքան, որքան կարող էր կտցով և մագիլներով

վերցնել: Կրեմը Շաս լաւն էր: Խնդրեմ՝ կարեկցէք և գնք միւս անգամ: Յտեսութիւն:

Միրոս Խ. »:

Ես գրեցի. «Վախենում եմ». ուղարկուած մարդուն մի գա՞նեկան աուի, տղային հիւղից հեռացրի և սկսայ համբուրել նամակը, իւրաքանչիւր բառը, իւրաքանչիւր տառը: Յետոյ մուրճը կրկին ձեռքս առայ:

Ճաշուայ մօտերքը եկաւ երկրորդ նամակը. «Գթասրտութիւնը գոյութիւն ունի նրա համար, որ մարդիկ մեղանչում են: Երեկոյեան կսպասեմ»:

Ես ինքս գրի պայթուցիկ ախանը՝ ինչ որ առաջարկութեամբ Շիմօնին հեռացնելով: Օղը ցնցող ստակալի թնդիւնը մարդկանց գեաօին տապալեց և ողջ անտառին հարկադրեց գողգողալ:

Այդ իմ յաղթութեան աղաղակն էր. ախան՝ «կրեմով սուրճ»:

Կեցցէ:

Մենք գնում էինք անտառով. կարծես՝ երկրի վրայ սպրելիս չը լինէինք:

Այնտեղ կար երկնագոյն, վճիտ աղբիւր, որի ափերին շարուած էին շուշաններ և կարմիր կակաջներ:

Ինքը միրտան էր գարնան նրանց այնտեղ տնկել: Նորա փթթել էին և անդրադարձել ջրի մէջ:

Դա մեր ամենասիրելի զբօսավայրն էր:

Երբ մի անգամ նա գնաց ազարակում գտնուած մարդկանց նախընթրիք տալու, ես պառկեցի այնտեղ երեսնիվայր՝ նայելով ծաղիկներին, ջրին և սրա մէջ անդրադարձած ծառերի կատարներին:

Ես մտածում էի Միրտայի և նրա զեղեցկութեան մասին: Յանկարծ զգացի աչքիս ինչ որ ձեռքի հպում:

— Ո՞վ է, — հարցրեց մի ոմն, փոխուած ձայնով: Ձը գիտեմ, ինչու ես պատասխանեցի:

— Կին է:

Մի բոպէ լուծիւն տիրեց, և Միրտան ինձ պատասխանեց իւր սովորական ձայնով:

Ես կին չեմ:

Գլուխս շուռ տուի և շեշտակի նրա աչքերին նայեցի:

Նա խիստ կարմրեց:

— Կին չեմ, — կրկնեց նա:

Ես, ի հարկէ, ոչինչ չը հարցրի այլևս:

— Իմ մարդուն ես գնացի, — շարունակեց նա, — իբրև մի խեղճ աղջիկ. երբ ինձ նրան տուին, տասնուութ տարեկան էի, իսկ նա՝ եօթանասուն: Չորս տարի սրանից առաջ:

Այժմ ես յարմար գտայ՝ հարցնելու:

— Դուք լսւ էք ապրում:

Նա մի բոպէ լուեց, ապա պատասխանեց:

— Մարդս շատ բարի է իմ վերաբերմամբ, և ես ամեն ինչ ունեմ:

. . . Ինձ թուաց, թէ շուշաններն ու կակաջները խոնարհեցրին գլխիկները:

Իայց, — շարունակեց նա, — ես աւելի շուտ նրա աղջիկն եմ, քան թէ կինը: Մենք երեխաներ չունենք:

. . . Ինձ թուաց, թէ շուշաններն ու կակաջները նորից զէպի գետին խոնարհեցրին գլխիկները:

— Դուք երեխաներ չունէք, — կրկնեցի մեքենայաբար:

— Որտ անախորժ է՝ երեխաներ չունենալը, — հառաչեց նա:

Բռնեցի նրա ձեռներն ու սկսայ համբուրել կրքոտ, ջերմ, անյուշ կերպով: Ես ինձ իրաւացի համարեցի, միանգամայն իրաւացի: Եւ նա չը փախցըրեց շրթունքներին սեղմուող ձեռներին մէջ գտնուած իր ձեռները:

Իմ, իմ. . . շնջացի:

Նա ոչինչ չը պատասխանեց:

Չազրայ շունը և դեռահաս Բեմ քարայծը, կարծես զարմացած, մեզ էին նայում. յետոյ շունը կաղկանձեց, քարայծն իր եղջիւրները դէմ արաւ նրան. շունը, ոլորելով պոչը, գժուածի պէս սկսաւ չորս կողմը վազել, ցատկոտելով առուակների և փոսերի միջով. քարայծը սլացաւ նրա յետևից:

Նա սկսեց ծիծաղել:

Միրտա, — ասացի, նայելով ինձ յառած նրա աչքերին:

— Իսկապէս, ինչ լաւ է. . . ասաց նա:

— Միրտա, — կրկնեցի ես:

Նա նայեց ինձ, և թուաց, թէ նրա աչքերը տեսնում են շատ բան:

— Այո, — ժպտաց նա, — զթասրտութիւնը գոյութիւն ունի, որովհետև մարդիկ մեղանչում են:

Նրա բոլոր խօսքերն ինձ թուում էին ինչ որ հրաշալի, հագուագիւտ բաներ, որ երբէք չէի լսել:

Մեր աշխատանքները գետի ձախ ափին արդէն վերջացել էին:

Ծերունի Շիմօնը մի անգամ, երեկոյեան, ինձ մօտ եկաւ՝ խօսելու ժամանակաւոր կամուրջի կառուցման մասին, որ կարելի էր աւարտել մի օրում:

Ի՞նչպէս, վաղը ես պէտք է թողնեմ այս տեղը:

Սկսեցի հազարաւոր պատճառներ հնարել, որոնց շնորհիւ պէտք էր այստեղ մնալ: Մի անգամ ուղեորուեցայ դիտելու կամուրջի մակերևոյթը և գտայ մի շարք սխալներ, ուղղելու բաներ, սր ստիպեց ծերունի Շիմօնին՝ գլուխը տարուբերել և զարմացմամբ ինձ նայել:

Վերջապէս նա յօնքերը կիտեց և խատութեամբ ասաց.

— Պէտք է առաջ գնալ, կամ գործն ուրիշի յանձնել:

Եւ նայեց ինձ, աչքերը կկոցելով:

Արիւնը գլուխս խփեց, ես ամաչեցի: Ծերունի Շիմօն, ի հարկէ, լաւ էր հասկանում, թէ ինչն այժմ ես այլ կերպ եմ հազնւում և երեկոներն սւր գնում ձիով: Նա ոչինչ չաւաց, որովհետեւ չէր համարձակւում ասել, այնուամենայնիւ աշխատանքը գնում էր առաջուայնման: Բայց այժմ նա կտրուկ կերպով ասաց.

— Պէտք է առաջ գնալ կամ գործն ուրիշի յանձնել:

Ես յուզուած կանգնել էի նրա առաջ: Նրա վիթխարի կերպարանքը խիստ էր իմիցս: Իր զարգացած կրծքի մկաններով՝ նա ժայռի էր նման: Ալեխառն մազերը թափուած էին ուսերին. ձերմակ, տակից փոքր ինչ խուզուած բեխերը ծածկել էին բերանը:

Զգացի, որ այստեղ աչքակապուկի խողալն իզուր է:

— Ի՞նչ կանէիք դուք, եթէ իմ տեղը լինէիք, — հարցրի ես:

Կարծում էի, թէ նա պատասխան կը տայ՝ մեղքի, ուրիշի սեփականութեան, հեռացած ծերուկ-մուսնու, եօթներորդ պատուիրանի և խղճի մասին, այն ինչ՝ նա յարեց միայն.

— Առաջ կը գնայի, կամ գործը կը յանձնէի:

— Եւ կը գնայիք առաջ:

— Եթէ միանգամ վճռէի գնալ, կը գնայի:

— Իսկ եթէ չը կարողանայիք գնալ:

— Ուր կամք կայ, այնտեղ «չեմ կարող» չը կայ:

— Բայց երբեմն կամքը քիչ է:

— Զը կայ մի կամք, որ քիչ լինի, բացի այն կամքից, որ իսկապէս չկայ:

— Վաղը մենք գիշերելու ենք գետի միւս կողմը: Նա պարզեց ինձ իր կոշտացած, ջլուտ ձեռները, թօթուեց ձեռքս և հեռացաւ, տրուբիան ֆստացնելով:

Վաղը մենք գիշերելու ենք գետի միւս կողմը...

Այդ նշանակում է...

Ես ձեռներով փակեցի աչքերս և ընկայ սեղանի ծայրին:

Այդ նշանակում է բաժանուել Միրտայից, ձգել ամեն ինչ, և՛ նրան, և՛ անտառում գտնուած այս կախարդական այգին և աղբիւրը՝ զարդարուած շուշան-

ներով ու կակաջներով, որ անկել էր նա գարնան:

Միրտան իմս չէր, իսկ ես ամբողջապէս նրանն էի. հոգով-մարմնով, բովանդակ գոյութեամբս յանձնուել էի նրան, կորել նրա մէջ:

Այդ երեկոյեան ոտքով նրա մօտ գնացի:

— Ի՞նչ է պատահել ձեզ, — հարցրեց նա շէմքին:

— Եկայ հրաժեշտ տալու. վաղը մենք գետի միւս կողմն ենք փոխադրուելու:

— Ինչո՞ւ:

— Մենք այստեղ աշխատանքը վերջացրինք:

Նա տարակուսանքով ինձ նայեց:

— Ի՞նչպէս. դուք փոխադրուելու էք:

— Այո, պարտաւոր եմ:

— Չը կայ «պարտաւոր եմ» այնտեղ, ուր կամք կայ:

Ես զարմացած նրան նայեցի:

— Մի քանի ընդէ առաջ այդ նոյն խօսքերը լսեցի իմ ականահատից:

— Դէ տեսնում էք:

— Այո, բայց նա այդ ասաց նրա համար, որ ես յետաձգում էի կամուրջի կառուցումը:

— Եւ դուք կսկսէք կառուցումը:

— Կսկսեմ:

— Եւ կը փոխադրուէք:

— Այո:

Նրա աչքերն առաջին անգամս էր, ինչ փայլում էին. կարծես նրանցում վառօդ բռնկուեց:

— Իսկ եթէ ես... — ընդհատեց նա... նրա դէմքը շառագունեց:

— Միրտա, — ասացի մեղմօրէն, բռնելով նրա ձեռքից, — Միրտա, ախր դու գիտես, որ ես պարտաւոր եմ զնալ. գիտես, թէ ինչո՞ւ եմ թողնում այս տեղը: Չէ որ այնտեղ հազարաւոր, միլիոնաւոր մարդիկ հաց և լոյս են սպասում: Եւ այդ ես կը տամ նրանց:

— Աստուած իմ, — գոչեց նա, ձեռները բարձրացրած. մի՞թէ բախտաւոր մի ժամն աւելի չարժէ, քան այն բոլոր իդէալները, որոնց ձգտում ես: Դու չես անիլ, ուրիշները կանեն:

— Բայց այդ ես եմ ուզում անել:

Նա աչքերով չափեց ինձ:

— Դու ասում ես, որ սէրն ու իդէալն է քեզ առաջնորդում, իսկ ես կասեմ, — հպարտութիւնն ու սնափառութիւնը:

Նրա աչքերն ու շրթունքներն այնպիսի արտայայտութիւն ստացան, որ ես չհամարձակուեցի նրան հակաճառել: Կարո՞ղ է աւելի ծիծաղաշարժ դրութիւն լինել, քան այն մարդու, որ ապացուցանում է, թէ ինքն աւելի լաւ է, քան մտածում են իւր մասին:

— Կոնց այստեղ: Ես ուզում եմ, որ դու մնաս... ես... խնդրում եմ...

Նրա գլուխն առաջին անգամ հակուեց իմ կողմը. ձայնն առաջին անգամ նմանուեց լազուր երկնքի վաղորդեան աստղերի ծագման:

Նա կ'աւելի իմ կողմը հակուեց. ես զգացի նրա շրթունքների ջերմութիւնը:

Ապա քնքոյշ ու մեղմիւ յետ քաշուեց և, ձեռքը մեկնելով ինձ, արասանեց խաղաղութեամբ:

- Ուրեմն, վերջին անգամ:
- Վաղը կը գամ՝ հրաժեշտ տալու:
- Ե՛րբ:
- Առաւօտ, լուսաբացին:

Սաղաղ ու մռայլ առաւօտ էր, որպէս այգու շուշաններով և կակաջներով շրջապատուած այն աղբիւրն իրիկուայ ժամին: Ես նրան էի սպասում:

Ողջ գիշերը չէի քնել: Զգում էի, որ սիրում եմ այդ կնոջը խենթի և ցնորուածի պէս. որ ծարաւի եմ նրան, ինչպէս բանասրկեալն՝ օդի, չքաւորը՝ հացի, ճամբորդը՝ ջրի: Այդ արդէն իմ 28 տարիները չէին, ոչ ամասուռայ տապը, ոչ իսկ ամիսներով կնոջից հեռու լինելը, — այդ սէրն էր. ես սիրում էի նրան այնպէս, ինչպէս սիրում են՝ սիրած դէպքում:

Իայց այնտեղ ինձ սպասում էր կամուրջը, երկաթուղու կառուցումը, սպասում էին անտառի այն կողմը գտնուած ողորմելի, խաւար ու քաղցած մարդիկ: Ես զգում էի, որ անկարող եմ առանց այդ կընտջն ապրել՝ մինչև այն ժամանակ, երբ, կամ ես պէտք է ապրէի, կամ նա: Մեզնից մէկն ու մէկը պէտք է տեղի տար, կամ ես՝ իմ սիրով, կամ նա՝ իր գեղեցկութեամբ, որ կաշկանդել էր ձեռքս ու ոտքս:

Եթէ հանգամանքներն այնպէս դժբախտ դասաւորուեն, որ կինը տղամարդու ճանապարհին կանգնէ և թոյլ չտայ նրան՝ կատարելու իր պարտքն ու պարտաւորութիւնները, այն դէպքում միլիոնաւոր

տղամարդիկ կնգնեն, և մահուան հրեշտակը նրանց անդունդը կը գլորէ: Հազարաւոր, միլիոնաւոր տղամարդիկ: Եթէ հանգամանքներն այնպէս դժբախտ դասաւորուեն, որ կինը՝ փոխանակ առազաստն առաջ մղող հողմ հանդիսանալու՝ ստորջրեայ խուժ դառնայ, փոխանակ առաջնորդ աստղ հանդիսանալու՝ կատաղի մրրիկ դառնայ, կենդանի աղբիւր հանդիսանալու՝ փոխարէն՝ ուժասպառ անող աֆիոն, այն ժամանակ հազարաւոր, միլիոնաւոր տղամարդիկ կը ջրլատուեն ու կնգնեն. այն ժամանակ վերջիններս ստիպուած կը լինեն ուժաթափ անել և տապալել կնոջ: Նոքա կը տապալուին, հէնց որ կնոջ գոհաբերութիւն անեն: Եթէ չես կարող խուսափել կնոջից՝ քանի դեռ նա գոյութիւն ունի, և միևնոյն ժամանակ զգում ես, որ եթէ նա զագարի գոյութիւն ունենալուց, ոյժ կունենաս առաջ գնալու, ապա ուրեմն նա չ'պէտք է գոյութիւն ունենայ:

Վարժունքի բնոյթը, նշանակութիւնն ու արժէքն են որոշում պայմանը:

Եթէ Միլրտան իմ ճանապարհը չը կտրէ, բախտաւորութիւն կը լինի. բախտաւորութիւն՝ նրա համար: Իսկ եթէ կտրէ, վայ նրան:

Այո, վայ նրան:

Այո, վայ նրան: Ես չեմ թոյլ տայ, որ նա՝ իբրև շար ճակատագիր՝ ճանապարհս կտրէ. չեմ թոյլ տայ և կրքիս, եթէ ամեն ինչ յանկարծ դժբախտ դասաւորութիւն ստանայ:

Եթէ բաղդը չի տնօրինել, որ կինն անտարբերութեամբ մօտենայ ինձ և ձեռք մեկնէ՝ միաբան աշ-

խատանքի համար, ուրեմն ես չեմ պատկանիլ ան
մարդկանց թուին, որոնք յուսահատութիւնից՝ խելա-
կորոյս աչքով նայում են անդունդին, ուր իրենց
փայփայած ձեռնարկութիւնն է գահավիժում:

Ես խաղալիկ չեմ դառնայ ճակատագրի ձեռքին,
կամ մի անիւ, որ գլորւում է այնտեղ, ուր հրում
են նրան:

Եթէ մինչև իսկ որևէ սոսկալի բան էլ անելու
լինիմ, — դուրս կը պրծնեմ և առաջ կերթամ:

Խաղաղ ու մռայլ առաւօտ էր. արևը նոր էր
սկսել հորիզոնից բարձրանալ: Այդ միջոցին յանկարծ,
անսպասելի կերպով, նա յայտնուեց իմ առաջ: Նա
հազին զգեստ չուներ, այլ միայն փափուկ և լայն
թիկնոց, որով ծածկուած էին տակի սպիտակեղէնները:
Նրա մարմինն ամբողջապէս գծագրուեց՝ որպէս
խոնաւ կտաւով սքօղուած մի անգրի:

Նա առաջ եկաւ և մի խօսք նետեց միայն.

— Կը գնանս:

Ես պատասխանեցի.

— Կը գնամ:

— Երեկոյեան ձորի մօտ եղիր, ուր մատուռն է
գտնուում: Եւ նա հեռացաւ, առանց շուռ գալու, նր-
ման մի հրաշագեղ արձանի, որի իւրաքանչիւր շարժ-
ւածքը խելաթափ էր անում:

Մօտենում էր խիստ շոգ ու խեղդող կէս օրը:
Քրտինքը ծրլուում էր բանւորներից, որոնք շինում էին

ժամանակաւոր կամուրջը: Արիւնը շարունակ գլուխս
էր խփում. ջերմութիւնն այրում էր շրթունքներս
ու աչքս:

Ինչ կը լինի երեկոյեան, այսօր երեկոյեան:

Ինչ էլ որ լինի, ես առաջ կերթամ:

Կամուրջ գցելը՝ դատարկ բան է. կարելի է յետ
դառնալ և հազար վերստից. բայց խոնարհուել,
ստրկացած՝ անձնատուր լինել կնոջ, որ իր յետևում
ոչինչ չի տեսնում, այդ նշանակում է՝ ձեռք վերցնել
սեփական կեանքից:

Նա մեղաւոր չէ: Նրան ոչինչ չեն սովորեցրել,
ոչինչ չեն ասել. նա ոչ մի բանի մասին չի մտածում
և ոչինչ չի գգում. մինչդեռ այնքան գեղեցիկ է, որ
կարելի է խելագարուել, մեռնել...

Եթէ մինչև իսկ ստիպուած լինիմ սպանել նրան,
դուրս կը պրծնեմ նրա գրկից...

Եթէ մինչև իսկ ստիպուած լինիմ սպանել նրան,
թոյ Աստուած անէ նրա դատաստանը:

Ըստ իս՝ իմ կեանքն աւելի թանկ արժէ, քան
այդ տեսակ տանեակ բոյսերի, ինչպէս և նրա:

Նա փթթում է այս անտառում, որպէս երկնա-
գոյն տատրակն՝ անտառի խորքում, ուր հողմն է
թափանցում և անձրևը միայն. նա նման է անապա-
տի արմաւենուն՝ բուսած մի բուռն հողի վրայ, որ
խիստ աննշան է՝ օտարիս դառնալու համար: Նա
իրաւունք չունի կարել իմ ճանապարհը:

Եթէ զգամ, որ նա ինձ հմայել է, որ ես կոր-
չելու եմ, այն ժամանակ կսպանեմ նրան՝ իբրև
մի վնասակար էակի:

Տաք, խեղդող կէսօրից յետոյ, վրայ էր հասնում նոյնքան տաք ու խեղդող երեկոն: Թւում էր, թէ գետինը ճաքճքում է տապից, ծառերը թօշնում են և չորանում, ինչպէս անտառի միւս բոյսերը: Զուրը գետի մէջ յոգնել էր, կարծես:

Ես գնացի պայմանաւորուած տեղը:

Դա գետից բարձր, մի լերկ-ապառաժուտ պատրուածք էր, ուր, երբեմն՝ շատ առաջ, հինօրեայ եղննու վրայ՝ մի սմն գամել էր մի սուրբի պատկեր, որի դէմքը չքացել էր իսպառ: Երբեմն Միրտայի հետ մենք զբօսնում էինք այստեղ:

Ես նստեցի քարի վրայ, ոտներս անդունդը կախելով, ուր շառաչում էր լեռնային վտակը. գլուխս խոնարհեցրի ձեռներիս և փակեցի աչքերս:

Բայց կարող է պատահել՝ լաւ լինի, այնպէս լաւ...

Չէ որ մենք կարող էինք այնպէս բախտաւոր լինել...

Կարող էինք գալ այդ քարի մօտ՝ միմեանց հետ յաւիտենական սիրոյ մասին խօսելու և ցմահ իրար սիրելու համար...

Ի՞նչն է ինձ առաջ մղում մարդկանց մէջ:

Միրտան չի թողնի իւր մարդուն և ինձ գայ:

Դատապարտուեմ այգօրինակ կեանք վարելուն, նշանակում է սուրս եմ փշրում սեփական գերեզմանիս վրայ: Ի հարկէ...

Բայց կարող է պատահել՝ այնպէս լաւ լինի, այնպէս լաւ...

Նրա ձեռներն ուսիս զիպան:

Ես սթափուեցայ մտքերիցս:

— Գնալու ես, — հարցրեց նա:

— Կամուրջը պատրաստ է. վաղը կը մեկնեմ:

— Եւ չես վերադառնայ:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ:

— Վախենում եմ:

— Ինձանից:

— Աւելի շուտ ինձնից:

Դու կարծում ես, չե՞մ գայ յետևիցդ:

— Այո, դու չես ցանկանում գալ ինձ հետ:

— Ուրեմն կաց այստեղ, կաց, կաց:

Նրա ձայնը շնչիւնի փոխուեց. նա՛ ծուկ չոքած մօտս՝ ուղղակի մրմնջում էր շրթունքնրով:

— Իսկ այնտե՞ղ. — ձեռքով ցոյց տուի զիմացը:

— Այնտե՞ղ. — նա յետ քաշուեց. — Այնտե՞ղ. ի՞նչ գործ ունիս այնտեղի հետ: Մի՞թէ ինձանից գերադաս ես համարում այն մարդկանց, որոնց չես սեսել երբէք: Դու կարծում ես, աւելի՞ բախտաւոր կը լինես այնտեղ, քան ինձ հետ: Ինչո՞ւ ես գնում այնտեղ. դու չը գնաս, ուրիշները կը գնան. մէկ, երկու, տասնեակ ուրիշներ. միայն դո՞ւ կարող ես կառուցել երկաթուղի: Ես միայն քեզ եմ ուզում սիրել. հասկանո՞ւմ ես, լսո՞ւմ ես: Քեզ, քեզ, միմիայն քեզ: Չե՞մ կամենում, որ դու հեռանաս ինձնից. դու պարտաւոր ես մնալ, պարտաւոր ես. և կը մնաս: Այստեղ՝ մերձակայ փոքր քաղաքում կը բնակուես դու, — շնչաց նա, կրկին ձայնը մեղմացնելով: Ես ձիով քեզ մօտ կը գամ... Դու տեսնը ձակատին

խայտ ունեցող իմ մոխրագոյն դամբիկը: Նա մըրկի պէս ինձ քեզ մօտ կը բերի: Ամեն օր մօտդ կը լինեմ, եթէ ցանկանաս: Ես չեմ խաբի մարդուս, կասեմ նրան բոլորը: Նա խեղօք է ու բարի:

— Ուրեմն յայտնիր նրան, որ չես սիրում իրեն, սիրում ես ինձ. որ ցանկանում ես ապրել, և գնանք միասին այնտեղ:

— Այնտեղ: Ո՛չ, ո՛չ. ես վախենում եմ: Երբէք ես այնտեղ չեմ դայ, երբէք: Ո՞վ կարող է իմանալ, թէ այնտեղ ի՞նչ է սպասում... ի՞նչ է սպառնում:

Իսկ այստեղ, նայիր. անտառ է. վիթխարի, դարաւոր, խուլ անտառ՝ լի անուշահոտութեամբ: վայրի ծաղիկներով, եղջերուններով ու պախրաններով, Տէս, միթէ այստեղ լաւ չէ: Համասպրամի և վայրի մասուրի հոտը չէս առնում: Տէս, ինչպէս ձարխոտը դէպի քեզ է ձգւում. նայիր նրա խոշոր, փքուած տերկներին: Լսիր, թէ ինչ է շշնջում քեզ անտառը... Նա էլ է ուզում քեզ պահել, այնքան սիրում է ինձ. իմ դարաւոր, հինօրեայ անտառը... Լսիր, թէ ինչպէս ազմկում է նա բարձրում: Նա սիրում է ինձ՝ գեղեցկութեանս, երիտասարդութեանս համար... Նա գիտէ, որ ես իր թագուհին եմ, անտառի գնւատրը, դարաւոր, խիտ անտառի գնւատրը: Նա ինձ սիրում է և իմ դժբախտութիւնը չի կամենայ... Դու կը բնակւես այստեղ, այնպէս չի: Չէս հրաժարուիլ ինձանից, չէս հրաժարուի անտառից և ինձնից:

Նա՛ ձեռները ծալած՝ ծնկների վրայ առաջ ընկաւ: Ես աչքս փակեցի և անդորրութեամբ հեռացրի նրան: Չենց նոյն բոպէին կայծակը ճեղքեց երկինքը, և հեռուից լսուեց որոտը:

Այդ կայծակը, կարծես, հրով խոցեց Միրտայի սիրտը:

Նա գետնից վեր ցատկեց և գոչեց.

— Կայծակով կը հրդեհեմ քո կամուրջը: Ես փոթորիկ էի ցանկանում, — և անձ նա: Անտառի վհուկն եմ ես. հոգուս ողջ կարողութեամբ մըրիկ կանչեցի. աղօթեցի տարերքներին. ես հեթանոսունի եմ և վայրենի կիւն: Կայծակով կը հրդեհեմ քո կամուրջը: Այնպիսի հեղեղ կառաջացնեմ, որ աշխատանքդ ի չիք կը դառնայ: Ալիքները՝ տաշեղի պէս՝ կը տանեն պողպատեայ սելաներդ: Տէս, լսիր:

Եւ մըրիկն, իսկապէս, վրայ հասաւ: Գորշ ամպերն՝ անլուր արագութեամբ՝ իրար հրահրելով մօտեցան. փայլատակեց կայծակը և ճայթեց որոտը: Չանցած հինգ բոպէ, յուզուեց մեր վերև մըրիկն անեղ:

Դարաւոր եղևինները պաշտպանում էին մեր գլուխներն անձրևից, որ հեղեղի պէս թափւում էր ամպերից:

Միմեանց յետևից լսուեցան որոտի ահաւոր զարկեր: Դա մըրիկ չէր. կարծես ամպ փուլ եկաւ:

Ես կանգնել էի անդունդի ծայրին, Միրտայի մօտ: Վիզը երկարացրած և կիսաբաց շրթունքներով՝ նա, կարծես, մի բանի էր սպասում, ինչ որ ուզում էր:

Յանկարծ հեռուում փայլատակեց հրային մի շերտ:

— Դո կամուրջը, — գոչեց Միրտան՝ յաղթական տօնով:

Վտակներն անտառում դուրս եկան ավերից. ջուրը յորձանքներով թափւում էր անտառի բլուրներէց: Ծառերի արանքում երևացին հեղեղասներ, որոնք մինչև այդ չը կային բնաւ. բարձրացան, դիզուեցին և շուտով քշեցին, տարան՝ հողից պոկւած կոճղեր, կայծակից ու քամուց տապալուած ծառեր: Համարեան մեր սոսների տակ գլորւում էին քարի կտորտանքն ու եղևնիները:

Յանկարծ ես ճղփոց ու շառաչ լսեցի ջրում:

— Ռեյսներդ, — գոչեց Միրտան:

Կասկածից դուրս էր, որ ամբողջ տարածութեան վրայ, ուր ամպը փուլ էր եկել, մեր աշխատանքը պէտք է կործանուէր. ջուրը պէտք է ողողէր, տանէր բոլորը:

Ես բռունցքներս սեղմեցի:

Կայծակի լոյսից, այրւող կամուրջի ցոլքից լուսաւորուած՝ ամպրոպային որոտմանց աղմուկի, մրրկի, անձրևի և հեղեղի մէջ՝ Միրտան կանգնել էր իմ դէմ, նայում աչքերիս, շրթունքները բացած, յօնքերը կիտած. նայում էր հուրհրատող աչքերով:

— Տեսնում ես: Դու առաջ չես գնայ. դու պարտաւոր ես մնալ: Ես հմայեցի փոթորիկը, դիւթեցի ջնըն ու կայծակը: Այրւում է քո կամուրջը, գլորւում են ռեյսներդ. բոլորն այնտեղ է սլանում, դէպ այն գետը, դէպի ցած: Դու պարտաւոր ես մնալ, ես այդպէս եմ կամենում:

Սոսկալի զայրոյթը ճնշում էր կոկորդս:

— Կը կառուցեմ նոր ճանապարհ, կը գցեմ նոր կամուրջ. — գոչեցի ես. — Ահաւոր անտառովդ դու

դուր ես ջանում պահել ինձ: Եթէ դուք երկուսդ անգամ մի հրէջ դառնաք, որ ճանապարս փակել ուզենայ, կը խեղդեմ նրան և առաջ կերթամ:

Միրտան, կարծես, չը լսեց խօսքերս: Նա ձեռքիցս բռնեց, ողջ ուժով սեղմեց և կրքոտ կերպով ասաց.

— Դու ինձ չես թողնի. երդուիր, որ չես թողնի: Ես ցանկանում եմ, ես պահանջում եմ այդ. երդուիր, դու իմն ես: Քեզ անտառն ինձ տուաւ և մըրիկը. քեզ հողմն ու անձրևն ինձ տուին. դու իմն ես: Երդուիր, որ կը մնաս այստեղ՝ ինձ հետ: Ի՞նչ գործ ունիս մարդկանց հետ, եթէ սիրում ես ինձ: Ես քոնն եմ, իմացիր:

Նա ձգեց ուսերիցս, և ես առաջին անգամ գըրկեցի նրա մարմինը: Մի վայրկեան ամեն ինչ մըթնեց ուղեղումս, շրթունքներս ցամաքեցին՝ օդի պակասութիւնից: Զգում էի, որ կորչելու եմ:

Իսկ Միրտան ինձ իրեն էր ձգում, հիւսում էր ձեռներս իրենների հետ և փաթաթում իր մարմնի շուրջը: Ես նրան բոլորովին մօտ զգացի մարմնիս:

— Դու իմն ես. — շնչաց նա. — երդուիր, որ չես գնայ այնտեղ:

Միրտա, — գոչեցի ես, — հեռացիր ճանապարհից: Փոթորիկը ոչնչացրեց աշխատանքս, բայց ես նորից կսկսեմ. իսկ դու բաց թող ինձ: Եթէ ինձ չես հասկանում, բաց թող ուրեմն: Իմ աշխատանքը կը շարունակուի ողջ կեանքումս. նա միայն մահուամբս կը վերջանայ. թող ինձ:

Երբէք: Ես գիտեմ, զգում եմ, որ դու իմն ես:

Քեզ տուաւ ինձ՝ անտանը, տուաւ մըրիկը, տուին հողմն ու անձրևը: Դու կը մնաս:

Նրա կուրծքն ընկած էր կրծքիս վրայ, շրթունքները՝ շրթներիս, մարմինը՝ մարմնիս: Ես զգում էի, որ նա չը պէտք է գոյութիւն ունենար, որպէսզի ես ապրել կարողանայի: Փոթորիկը, կամուրջի այրուիլը, ջրի մէջ թափուող ուելմաների ճղփոցն ու շառաչը կորցրին գիտակցութիւնս:

Թող ինձ. — գոչեցի ես, Միրտայի ձեռքից գուրս պրծնելով:

— Երբէք:

Նրա ձայնի մէջ յաղթութիւնն էր հնչում: Ես սատանուեցայ ու հակուեցի դէպի նրա ոտները: Եթէ ես թէկուզ մի անգամ դիպչեմ նրա շրթներին, թէկուզ մէկ անգամ յանձնուեմ նրան, — կը կորչեմ ընդ միշտ: Եւ ես չեմ դիմանայ, չեմ դիմանայ, չեմ դիմանայ:

Նա ծծեց ինձ. ես անյայտացայ, կորայ նրա մէջ: Նրան թուում էր, որ յաղթում է ինձ. որ ես՝ իբրև կտրուած մի ծառ՝ կնկնեմ նրա ոտների մօտ. կը հրաժարուեմ իր համար՝ ամեն ինչից. կերզուեմ, որ երբէք չեմ թողնի իրան...

Նա յաղթանակում էր...

Յանկարծ ուղեզս թարմացաւ, պարզուեց ու զգաստացաւ: Անլուր արագութեամբ ըմբռնեցի մաթեմատիկական ճշմարտութիւնը. որպէսզի ես կարողանամ ապրել, նա չը պէտք է գոյութիւն ունենայ:

Եւ կատարեալ գիտակցութեամբ, թէ ինչ եմ

անուս, մաթեմատիկական ստանութեամբ, մեքենայական շարժման ողջ հանգստութեամբ, ձեռներս խլելով նրա ձեռներից, խփեցի նրա կրծքին և պատուաւածքի եզրից անգունդը ձգեցի:

Այժմ նրա սպիտակ մարմինը պէտք է գլորուի. գլորուի այնտեղ, ներքև, դէպի գետը, որ շառաչմամբ տանում է ծառեր, քարեր, կամրջիս գերաններն ու խորտակուած ճանապարհիս ուելմները:

Ճղներն ու ոստերը ծուլատում են նրա դէմքը, պատուում կուրծքը, ազդրերը և ճերմակ ոտները. քարերը փշրում են նրա սակրները. սոսկալի, հրէշաւոր ճղները խոցեցին նրա աչքերը, նրա աչքերը:

Ջուրը բերանն էլցւում, խեղդում և ճնշում նրան... Նրա մազերը, երկար, մետաքսանման, գզգզուած մազերը փաթաթուում են ճիւղերից, խառնուում ոստերին, խճճուում տապալուած, մատղաշ սոճիներին. խճճուում են և քաշում նրան. ինչ տանջանք է, Աստուած:

Նա դեռ ապրել կարող է...

Տէր Աստուած, Տէր Աստուած, Տէր Աստուած. փոթորիկ, ջուր: Դու, ահաւոր անառ, սպանիր նրան:

Տէր Աստուած: Սպանեցէք նրան. թող մեռնի: Օ, օ:

Հետևեալ օր մենք կրկին աշխատել սկսանք: կայծակից այրուած կամուրջը փուլ էր եկել ջրի միջ. ահագին տարածութեան վրայ ջուրը տեղահան էր արել և տարել ուելմները:

Մենք աշխատանքն սկսեցինք սկզբից:

Ես իշխում էի անտառի, մրրկի, տարերքների և ինքս՝ ինձ վրայ: Կը գնամ այնտեղ, ուր ցանկանում եմ: Յաղթանակ: Ահաւոր անտառը գուր ինձ սպառնաց: Ես մտայ նրա մէջ, բռնութեամբ վերցրի նրան, անարգեցի նրա սրբութիւնն ու գեղեցկութիւնը. հարկադրեցի նրան՝ ճանաչել ինձ՝ իր իշխանաւոր: Բայց նա յարձակուեց վրաս մրրկով, կայծակով, հեղեղով, — և յաղթուեց կռուի մէջ:

Հարիւրաւոր ձեռներ բարձրացնում էին կացինները, և այդ հարիւրաւոր ձեռներն՝ իմ կամքն էր միայն:

Սիրտս, արիւնս և զգացմունքներս հմայելով՝ աչքիս առաջ՝ նա ինձ մօտ դրաւ կնոջը. ճանապարհս փակեց նրա աչքի փայլով, շրթունքների քաղցրութեամբ, ձայնի թովչութեամբ, կրծքի ալեկոծութեամբ, աղեղնաձև ազդերով, — սակայն ես նրան անդունդը գլորեցի:

Կը գնամ, ուր ցանկանում եմ. կը գնամ յաղթական:

Ես զօրեղ եմ, անյաղթ, սրբագործուած յաղթութեամբ:

Կը շարունակեմ ճանապարհի կռուցումը: Երբ այս գիծն աւարտեմ, կսկսեմ մի ուրիշը, նորը: Առանջ և առանջ:



ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԵԿ

ՀՀ Ազգային գրադարան



NL0322377

16.212

